

**ՏԱՌԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ
ԱԶԴՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐ
(ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ազիզյան Մ. Տ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

azizyanmary@gmail.com

Ներկայացման ամս.՝ 31.07.2019

գրախոսման ամս.՝ 07.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 29.08.2019

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տառերի գունային զուգորդությունները 18-35 տարեկան անձանց մոտ: Դիտարկված է նոր մոտեցում համաձայն որի՝ հայերեն տառերն առաջացնում են գունային ընկալումներ և այդ գունային ընկալումները կարող են փոփոխվել ըստ սեռի, բնակության վայրի: Հետազոտության ընթացքում կիրառվել է գիտափորձ, որի ժամանակ օգտագործել ենք տառերի գունային զուգորդությունները բացահայտող, մեր կողմից մշակված թեստը՝ հիմք ընդունելով Մ. Լյուշեռի թեստը: Կատարված հետազոտության արդյունքների վերլուծության համաձայն՝ վարկածը, որն է՝ հայերեն տառերի գունային զուգորդությունները փոփոխվում են կախված սեռային և աշխարհագրական գործոններից՝ մասամբ հերքվեց:

Հանգուցային բառեր՝ հայերեն տառեր, գունային զուգորդություն, գիտափորձ, սեռ, բնակության վայր:

Ծոված օրվանից մենք առնչվում ենք գույների և իրենց տարաբնույթ երանգների հետ: Դրանք դրսևորվում են բնության, մեր մշակույթի, արվեստի, հագուստի, անձի գունային նախընտրությունների մեջ: Հայտնի է, որ գույներն ունեն շատ բարձր հուզական բաղադրիչ և շատ հաճախ ստանալով մեզ համար նշանակալի իմաստ՝ դադարում են լինել պարզապես գույն:

Գույնի մեկ ընդհանուր սահմանում գոյություն չունի, տարբեր փիլիսոփաներ, մտածողներ, գիտնականներ գույնին տվել են տարբեր բնութագրումներ, մեկնաբանություններ:

Արիստոտելի մեկնաբանությամբ գույնը մի երևույթ է, որին ձգտում է ամեն կենդանի շունչ: Գույնը ստեղծված է գեղեցկության համար, իսկ գեղեցկությունը մարդու կյանքում անհրաժեշտություն է, ուստի՝ գույնն ինքնին անհրաժեշտություն է,– պնդում էր Ի. Գրանտը [3]:

Հեգելի կարծիքով գույնը ոգեշնչման և կենդանություն տվող երևույթ է: Դեմոկրիտն էլ պնդում էր, որ գույնը կազմված է ատոմներից, որոնք իրենք իրենցով անգույն են: Իսկ Նյուտոնը գույնն առանց լույսի չէր դիտարկում: Ըստ նրա՝ գույնը զգացողություն է, որն առաջանում է, երբ լույսն ազդում է տեսողական օրգանի վրա [6]: Գույնն ունի 5 հիմնական գործառույթներ՝ հաղորդակցական՝ տարրերի միջև

կապ ստեղծելով, խորհրդանշական և արտահայտչական՝ փոխանցում և առաջացնում է հույզ, տարբերակող կամ առանձնացնող և համախմբող [5]:

Գույները լինում են երկու տեսակի՝ հիմնական և հավելյալ: Հիմնական կամ սկզբնական գույներն են կապույտը (470 նմ), դեղինը (572 նմ), և կարմիրը (650-700 նմ): Հավելյալ գույները մեզ հայտնի մնացած բոլոր գույներն են, որոնք ստացվում են 3 հիմնական գույներն իրար հետ խառնելիս [2]: Լյուշերը նույնպես գույները տարբերակում էր հիմնական և հավելյալ գույների: Ըստ նրա հիմնականներն են՝ կապույտը, կանաչը, կարմիրը, դեղինն, իսկ հավելյալներն են՝ մանուշակագույնը, շագանակագույնը, սևը, մոխրագույնը: Նրանցից յուրաքանչյուրն իրենց նշանակությունը, դերն, ազդեցությունն ունեն մարդու հոգեկանի վրա [3]:

Մենք գույներն ոչ միայն տեսնում, ընկալում, տարբերակում ենք, գործածում, կրում իրենց ազդեցությունն, այլ նաև որոշակի իրերին, երևույթներին տալիս ենք գունային որոշակի զուգորդություններ: Գունային զուգորդությունները լինում են շատ տարբեր, բայց և միաժամանակ նկատվում են գունային զուգորդությունների, նախընտրությունների որոշ ընդհանրություններ որոշակի սոցիալական խմբերում, ազգերում, էթնոսներում, կոնկրետ աշխարհագրական դիրքում գտնվողների (օրինակ նույն մարզի, քաղաքի բնակիչների) միջև, ինչպես նաև գունային նախընտրությունները շատ հաճախ կախված են տարիքից, սեռից, մշակութային մակարդակից, խառնվածքից, կրթությունից և այլն [7]:

Այս հոդվածի շրջանակում մենք կանդրադառնանք միայն սեռին և բնակության վայրին, որպես գունային զուգորդությունների վրա ազդող գործոններ:

Գերմանիայում կատարել են հետազոտություն, ըստ որի Մյունխենում կարմիր և դեղին գույներն առավել նախընտրելի են, իսկ կապույտը՝ 6%-ով քիչ, մոխրագույնն ու շագանակագույնն էլ մերժում են 10% ավելի շատ, քան Գերմանիայի այլ մարզերում, քաղաքներում: Համբուրգում և Հանովերում կարմիրը և դեղինը, որպես ամենից նախընտրելի գույն (1-ին հորիզոնականում) 20%-ով ավելի քիչ է հանդիպում, իսկ կապույտը 10%-ով ավելի հաճախ, քան Մյունխենում: Իսկ Մյունստերի և Բիլթելդի բնակիչները, համեմատած Մյունխենի, կարմիրը և դեղինն ընտրում են որպես նախընտրելի (առաջին և երկրորդ հորիզոնականում) 22%-ով ավելի քիչ, իսկ կապույտը նախընտրում են 15%-ով ավելի հաճախ: Այս պատկերի պատճառ կարող է լինել այն, որ Մյունխենում ավելի հակված են ակտիվություն ցուցաբերելուն, իսկ մնացած տարածքներում՝ հանգստության, ներքին ապրումների վրա կենտրոնանալուն [4]:

Գ. Ֆրիլինգը և Կ. Աուերը հետազոտելով, թե գունային նախընտրություններն ինչպիսին են լինում կախված մարդկանց սեռից, տարիքից, եզրակացրեցին, որ 4-10 տարեկանները նախընտրում են կարմիրը, մանուշակագույնը, վարդագույնն ու փիրուզագույնը, և իրենց համար ոչ նախընտրելի են՝ սևը, մուգ շագանակագույնը, մոխրագույնը: Համաձայն հետազոտական տվյալների՝ երկու սեռերի միջև չկա գունային նախընտրությունների էական տարբերություն [1]:

Չնայած գունային զուգորդությունները բացահայտող, նրանց վրա ազդող գործոնների ուսումնասիրությունները շատ են, սակայն մենք չենք հանդիպել աշխատանքներ, որոնք նվիրված են հայերեն տառերի գունային զուգորդությունների, նախընտրությունների ուսումնասիրմանը: Տառերը հայերիս համար ունեն էթնոպահպան, էթնիկ նույնականացման, պատկանելիության զգացման մեջ էական նշանակություն: Դարեր շարունակ մենք՝ հայերս, տառերը պատկերել ենք թռչնագրերով, զարդատառերով, որոշակի գունային պատկերազարդմամբ: Այդպիսի օրինակներ կարող ենք տեսնել պահպանված ձեռագրերում, վիմագրություններում (Արցախի Դադիվանք եկեղեցում մի քանի վիմագրություններ պատկերված են որդան կարմիրով):

Այսպիսով՝ ցանկանալով ուսումնասիրել երկու խորհրդանիշների՝ գույների և տառերի համադրությունը, հայերի մոտ տառերի այժմյան գունային զուգորդությունները, նախընտրությունը կատարեցինք տեսական և հետազոտական ուսումնասիրություն, որի նպատակն է՝ ուսումնասիրել 18-35 տարեկան մարզաբնակ և երևանաբնակ անձանց մոտ հայերեն տառերի գունային զուգորդությունները: Գիտափորձին մասնակցել են՝ 18-35 տարեկան 70 անձիք, որոնցից 30-ը՝ մարզաբնակ (ընդգրկված են Երևանից հյուսիս ընկած մարզերը) և երևանաբնակ արական սեռի ներկայացուցիչներ են, 40-ը՝ մարզաբնակ (ընդգրկված են Երևանից հյուսիս ընկած մարզերը) և երևանաբնակ իգական սեռի ներկայացուցիչներ: Հետազոտության հիմնական մեթոդական համակազմը հանդիսանում է՝ տառերի գունային զուգորդությունները բացահայտող, մեր կողմից մշակված թեստը (թեստի տեսական հիմքն է Մ. Լյուշերի 8 գույնների թեստը):

Տառերի գունային զուգորդությունները բացահայտող գիտափորձի ժամանակ 70 հետազոտվողներին ներկայացվում էին հայերենի 39 տառերը (բոլոր տառերը տրվել են մեծատառ, տպատառ տեսքով, բացի «և» տառից, այն ներկայացրել ենք փոքրատառով), որոնցից յուրաքանչյուրը ներկված էին 8 տարբեր գույներով, այսինքն՝ A4 թղթի վրա փակցվում էին օրինակ Ա տառը 8 տարբեր գույներով (կապույտ, կանաչ, կարմիր, դեղին, մանուշակագույն, շագանակագույն, սև, մոխրագույն): Փորձարկվողներին տրվում էր հետևյալ հրահանգը՝

Ձեզ ենք ներկայացնում տարբեր գույներով պատկերված հայերենի տառերը. յուրաքանչյուր տառ պատկերված է 8 տարբեր գույներով: Ընտրե՛ք տառի այն գունային պատկերը, որը Ձեզ ավելի դուրեկան է քան նույն տառի այլ գունային պատկերը:

Հետազոտական տվյալների համաձայն՝ 18-35 տարիքային խմբում հայերենի այբուբենի տառերն ամենից շատ զուգորդվում են կամ իրենց ավելի շատ դուր է գալիս, երբ տառերը պատկերված են լինում սև գույնով (23.01%), իսկ ամենաքիչը՝ շագանակագույնով (4.92%):

Մենք կարծում ենք, որ սև գույնի դոմինանտումը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ 18-35 տարեկան անձիք տարրական դասարանում տառուսուցման ժամանակ տառերը տեսնում և պատկերում էին սև գույնով:

Աղյուսակ 1.

18-35 տարեկան և՛ երևանաբնակ, և՛ մարզաբնակ արական և իգական սեռի ներկայացուցիչների մոտ տառերի առկա գունային զուգորդությունների քանակական դրսևորումները՝N=70:

	Վաղույր	Վանաչ	Վարմիր	Դեղին	Մանուշակագույն	Շագանակագույն	Մև	Մոխրագույն
Ա	6	12	23	4	3	2	19	1
Բ	18	11	8	7	5	3	16	2
Գ	11	11	10	7	4	3	18	6
Դ	7	8	11	14	2	6	18	4
Ե	12	7	13	12	6	3	13	4
Տ	4	8	10	15	4	2	20	7
Ը	10	8	6	11	6	2	19	7
Ը	10	11	12	7	4	8	12	6
Թ	13	9	5	7	14	2	14	6
Ժ	10	5	11	9	4	5	21	5
Ի	13	6	15	13	4	1	11	7
Լ	8	8	15	14	4	3	12	6
Ն	6	12	10	10	3	5	18	6
Ս	17	12	8	9	5	2	15	2
Վ	11	16	9	2	4	2	17	9
Հ	7	8	8	10	4	2	20	11
Ձ	8	12	6	9	5	1	15	14
Ղ	9	3	8	5	5	7	21	12
Ճ	13	13	9	11	1	5	14	4
Մ	9	10	15	10	6	1	15	4
Յ	5	10	9	7	10	6	16	7
Լ	10	13	11	3	6	4	17	6
Ը	5	9	7	11	7	9	16	6
Ո	12	7	9	7	8	8	16	3
Չ	5	11	7	3	3	7	28	6
Պ	11	14	8	4	2	3	24	4
Ձ	15	15	14	9	2	0	12	3
Ղ	9	13	9	6	8	2	10	13
Ս	8	8	9	6	9	1	21	8
Վ	8	14	14	8	6	5	10	5
Տ	10	13	8	6	8	5	12	8
Ը	5	8	6	13	3	6	18	11
Ց	10	6	2	12	6	3	25	6
Ո	12	8	9	11	3	4	20	3
Փ	11	14	4	5	8	5	12	11
Ք	10	13	9	12	0	2	17	7
Ե	7	8	9	8	3	3	26	6
Օ	13	7	7	9	3	3	22	6
Ֆ	3	16	6	8	5	3	23	6
Ընդհանուր	371 Վառվ 12.68%	397 Վառվ 13.57%	369 Վառվ 12.62%	334 Վառվ 11.42%	193 Վառվ 6.6%	144 Վառվ 4.92%	673 Վառվ 23.01%	248 Վառվ 8.48%

Համաձայն աղյուսակ 1-ի՝ տառերից յուրաքանչյուրն առանձին ամենից շատ զուգորդվել են հետևյալ գույներով՝ Ա-ն՝ կարմիր, Բ-ն՝ կապույտ, Գ-ն՝ սև, Դ-ն՝ սև, Ե-ն՝ կարմիր, սև, Զ-ն՝ սև, Է-ն՝ սև, Ը-ն՝ կարմիր, սև, Թ-ն՝ մանուշակագույն, սև, Ժ-ն՝ սև, Ի-ն՝ կարմիր, Լ-ն՝ կարմիր, Խ-ն՝ սև, Ծ-ն՝ կապույտ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ տառերը՝ սև, Մ-ն՝ կարմիր, սև, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ տառերը՝ սև, Թ-ն՝ կապույտ, կանաչ, Ռ-ն՝ կանաչ, Ս-ն՝ սև, Վ-ն՝ կանաչ, կարմիր, Տ-ն՝ կանաչ, Բ, Ց, ՈՒ տառերը՝ սև, Փ-ն՝ կանաչ, Բ, Լ, Օ, Ֆ տառերը՝ սև:

Որպեսզի բացահայտենք տվյալ տարիքային խմբում յուրաքանչյուր տառի գունային զուգորդումների փոփոխություններն ըստ սեռի, բնակության վայրի, կատարեցինք համեմատական վերլուծություն, համաձայն որի՝ Ա տառը տղաներն ամենից շատ զուգորդում են սև գույնով, աղջիկները՝ կարմիր, մարզաբնակները և երևանաբնակները կարմիր գույնով, Բ-ն՝ տղաները՝ սև, աղջիկները՝ կապույտ, մարզաբնակները՝ սև, երևանաբնակները՝ կապույտ, Գ-ն՝ տղաները՝ սև, աղջիկները՝ կանաչ, կարմիր, մարզաբնակները՝ սև, երևանաբնակները՝ կապույտ, սև, Դ-ն՝ տղաները՝ սև, աղջիկները՝ դեղին, մարզաբնակները՝ սև, երևանաբնակները՝

Վերոնշյալ տվյալները փաստում են, որ տառերի գունային զուգորդությունները մեծամասամբ տարբեր են տարբեր սեռերի և տարբեր աշխարհագրական դիրքերում բնակվողների մոտ: Այս տարբերությունների ուսումնասիրումը կարող է օգնել հոգեբանորեն ավելի ազդեցիկ գովազդներ նկարահանելուն, ինչպես նաև՝ յուրաքանչյուր գործընթաց կատարելիս, որոնցում կարևոր է, թե տվյալ թիրախային խումբը կոնկրետ ինչպիսի գունային ընկալում, նախընտրություն ունի:

Գրականություն

1. **Базыма Б. А.** Психология цвета: Теория и практика, Изд: Речь, 2005, стр. 110.
<http://dspace.univd.edu.ua/xmlui/bitstream/handle/123456789/1015/%D0%9E%D0%B1%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4%D0%B8%D0%BD%D0%BA%D0%B0.pdf?sequence=2&isAllowed=y> 01.05.2019
2. **Денисов В. С., Глазова М. В.**, Восприятия цвета, Часть 1, М.: Эксмо, 2009 г., 176 с.
3. **Драгунский В. В.**, Цветовой личностный тест: Практическое пособие, Мн: Харвест, 199 г., -488 с.
4. **Кармин А. С.**, Психология рекламы, Изд.-ДНК, 2004 г., стр. 510.
5. **Кошеренкова О. В.**, Символика цвета в культуре, 2015 г., стр. 156-162.
<https://cyberleninka.ru/article/v/simvolika-tsveta-v-kulture> 01.05.2019
6. **Потокина Т. М.**, Понятия цвета и его роль в архитектуре, Журнал: Философские проблемы культуры, 2009 г. стр. 77-79
<https://cyberleninka.ru/article/v/ponyatie-tsveta-i-ego-rol-v-arhitekture> 01.05.2019
7. **Шевченко М. А.**, Психологические цветы и рисуночные тесты для взрослых и детей, Москва: АСТ, Кладезь, 2015 г., 128 с.

О НЕКОТОРЫХ ФАКОРАХ, ВЛИЯЩИХ НА СОЧЕТАНИЯ ЦВЕТОВЫХ АССОЦИИ БУКВ (НА ПРИМЕРЕ БУКВ АРМЯНСКОВО АЛФАВИТА)

Азизян М.Т. (ЕГУ, Ереван, Армения)

Целью данной работы является исследование сочетаний цветовых ассоциации букв у людей в возрасте от 18 до 35 лет. Рассмотрен новый подход, согласно которому армянские буквы порождают цветовые восприятия, которые в свою очередь меняются в зависимости от пола и места жительства. В ходе исследования, был применён эксперимент, во время которого использовался разработанный нами тест, в основе которого лежит ЦТО М. Люшера. Согласно анализу результатов исследования – гипотеза об изменении цветовых ассоциаций букв в зависимости от половых и географических факторов отчасти опровергнута.

Ключевые слова: армянские буквы, сочетание цветных ассоциации, научный опыт, пол, место жительства.

SOME FACTORS INFLUENCING ON THE COLOUR ASSOCIATIONS OF THE LETTERS (WITH ARMENIAN LETTERS EXAMPLE)

Azizyan M.T. (YSU, Yerevan, Armenia)

The purpose of this work is to study the combinations of color associations of letters in people aged 18 to 35 years. A new approach is considered, according to which Armenian letters give rise to color perceptions, which in turn vary depending on gender and place of residence. In the course of the study, an experiment was used, during which the test we developed was used, which is based on M. Lüscher's TEC. According to the analysis of the research results, the hypothesis of a change in the color associations of letters depending on gender and geographical factors has been partially refuted.

Keywords: *Armenian letters, color, associations, scientific experiment, sex, residence.*